

Մ. Մ. ՄԱԶՄԱՆՅԱՆ

ԳԵՏՆԱՆՈՒՅ

ՀԱՅՊԵՏԱՐԱ

633.36 | 7249
U-14 | Անդրեաս, Ա. Ա.
Գլուխով

504.

ՀԱՅԿ. ՍՍՌ-Ի ԱՆԴԱՐԴՔՈՂԿՈՄԱՑԻ ԱՅԳԵՊՏԱԲՈՒԾԱԿԱՆ
ԳԻՏՈՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՍԵԼԵԿՑԻՈՆ ԿԱՅԱՆ

ՀԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՍԵՐԻԱ № 2

633.36

Վ-14

Ա. Ա. ՄԱԶՄԱՆՅԱՆ

ԱՅՍԻԳԱՆ Է 1961 թ.

Գ Ե Տ Ն Ա Ն Ո Ւ Ճ

4249

A 18411



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՐԵՎԱՆ ● 1942

ԽՄՐԱԾԳՐՑՆԱՆ ԿՈԼԵԴԻՑ.

Դ. Ն. ԳՐՈՒՏՈՍԵՐԴՈՎ—բիոլոգ. զիս. դոկտոր
Տ. Ա. ՄԱԼԻԿԱՍՅԱՆ—գյուղ. զիս. թեկ. դոցենտ
Վ. Ա. ՍՈՑԱԴՅԱՆ—ավագ զիս. աշխատանող

Անդհանուր Խմբագրաւրյամբ՝ պրոֆ. քոլի. Դ. Խ. ԱԳՈՅԱՆՑԱՐԵՆ
Պատ. խմբագիր՝ գյուղ. զիս. թեկ. դոցենտ Մ. Հ. ՄԱԼԻԿԱՍՅԱՆ,

մ. մ. ՀԱՅԱՀՅԻ

ԱՐԱԽԻԾ

(На армянском языке)
Արմգլ—1942—Երևան

ԳԵՏԱՆԱԿ

Գետնանուշը (չինական բնկցւյզ, արախիս—Arachis hypogaea) 25-ից (փուլած ձևերը) 50սմ (կանգուն ձևերը) բարձրությամբ, միամյա, յուղատու բռւյս է, պատկանում է ընդեղենների (Leguminaceae) բնուանիքին, որին պատկանում են նաև լորին, սոյան, սիսեռը, սսպը, քուրուչնան, վիկը, մաշը և մի շարք այլ արժեքավոր բռւյսեր:

Գետնանուշի ցողունը քառակող է, ճյուղավոր:

Տերեները մանր են, զույգ-փետրածե, երկու զույգ հերթագիր դասավորությամբ, ձվածե, թույլ խավագատատերեկիներով: Սրանք նստած են մոտ 5 սմ երկարությամբ հաստ տերեւակոթի վրա:

Գետնանուշի ցողունն ու տերեւակոթերն ավելի խավապատ են, քան տերեները:

Ծաղիկները փոքր են, դեղին կամ նարնջագույն, երկար ու բարակ ծաղկակոթերով և տերեւածոցերում նստած: Ծաղիկներն ինքնափոշոտվող են և ծաղկման շատ կարծ շրջան ունեն (սովորաբար վաղ առավոտյան բացվում են, իսկ օրվա վերջում թառամում):

Այս կուլտուրայի բիոլոգիական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ծաղկելուց հետո ծաղկի կոթունը թեքվում է դեպի հողը և բեղմնավորված սերմնարանը թափվում է հողի մեջ (7—10 սմ խորությամբ), որից հետո գաղաքում է պտղակոթի աճը և սկսում է զարգանալ ինքը սերմնարանը, զառնալով զարչնագույն կամ բաց վարդագույն ունդ:

Ունդերում սովորաբար 2 սերմ է լինում, բայց նայած սորին՝ 1—4 սերմ էլ է լինում:

Մի բույսի վրա 30—40 ունդ է լինում: Պտուղների երկարությունը 2—6, իսկ լայնությունը 1—2 սմ. է: Սերմերն

ապիտակ, շագանակագույն, կտո՞ր կարմիր գույնի են: Ար-
բանցից սպիտակն ավելի հարգի է:

Պաղի՝ հողի մեջ ձևավորվելու այս առանձնահատկու-
թյան չնորհիվ բույսը գեանանուշ է կոչվում:

2. ԳԵՏՆԱՆՈՒԾԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Գետնանուշի հայրենիքը Հարավային Ամերիկան է: Դիմավորապես տարածված է Պերույում և Բրազիլիայում:

Դեռևս 1887 թվին այդ բույսը մշակվել է Պերույում, որտեղից և տարածվել է ԱՄՆ-ի արևելյան ու հարավային մասերում, գլխավորապես Վերգինիայի, Հարավային և Հյուսիսային Կարոլինիայի (Գյորգիայի), Թեննեսի նահանգներում և Կալիֆորնիայի հարավ-արևմտյան մասերում:

Գյորգիայում գետնանուշն աճում է ծովի մակերեսույթից 350—500 մետր բարձրության վրա:

Գետնանուշը վաղուց ի վեր լայնորեն մշակվում է Աֆրիկայում և Ասիայի արևադարձային ու մերձարևեադարձային մի շարք երկրներում (Չինաստան, Ճապոնիա, Արևելյան Հնդկաստան, Խաղաղ օվկիանոսյան կղզիներ):

Եվրոպայում գետնանուշը տարածված է Միջերկրական ծովափնյա երկրներում: ՍՍՌՄ-ում գետնանուշը հայտնի է 19-րդ դարի առաջին կեսերից և մշակվում է Թուրքեստանում, Ռւսաստրիական երկրամասում, Անդրկովկասում, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում:

Գետնանուշի մշակման համար պիտանի ուայոններն են՝
ա) Վրաստանում— արևելյան ու արևմտյան Վրաստանի հովիտները:

բ) Ադրբեյջանում— Զաքաթալայի շրջանի, Լենքորանի, Ալշերոնի ավագուտ հողերը և այլ երկրագործական ուայոնները (ծ. մ. 500 և ավելի մետր բարձրության վրա):

դ) Հայաստանում— գլխավորապես Մեղրու ցածրադիր մասերը և Արարատյան դաշտավայրը:

Գետնանուշի գրաված տարածությունը ՍՍՌՄ-ում կազմել է՝ 1935 թ. 4,1 հազար հեկտար, 1936 թ. 6,5 հազար հեկտար, 1937 թ. 13,6 հազար հեկտար, որից 2,5 հազար հեկտարը եղել է Վրաստանում և 2,6 հազար հեկտարը՝ Ադրբեյջանում:

Համաձայն Վրաստանի կոմագարտիայի կենտրոնի որոշ-
ման, Վրաստանի ժողովրդական տնտեսության գարգաց-

ման 2-րդ հնգամյա պլանում նախատեսված էր 1933-1937 թ.թ. գետնանուշի և այլ յուղատու բույսերի ցանքի տարածությունը հասցնել 60 հազար հեկտարի:

Հայաստանում գետնանուշի մի հեկտարի նվազագույն բերքը 5 ցենտների է հասնում, միջինը՝ 8—9-ի, իսկ բարձրը 13-ի: Սակայն բերքի այս քանակը ցածր է և ազրութեանարկումներն անշեղ կիրառելու դեպքում կարելի է ավելին ստանալ:

Հարավում (Աֆրիկա, Իսպանիա) հեկտարից 19—34 (նույնիսկ մինչև 42) ցենտներ բերք է ստացվում: Արարատյան զաշտավայրում, լավ մշակության վեպքում, գետնանուշից նույնպես կարելի է ստանալ լավ բերք և բարձրակ սերմեր: Մեղքում մշակվող գետնանուշը համեմատաբար ավելի խոշոր է և յուզալի:

Անհրաժեշտ է ամենալուրջ ուշադրությունը դարձնել գետնանուշի նոր սորտեր ստանալու և մշակության մեջ եղած ձևերի աղնվացման աշխատանքների վրա:

Այս կուլտուրայի մշակության համար Հայաստանում լայն հարավորություններ կան: Պետք է զարկ տալ այս կուլտուրայի մշակությանը, առանձնապես բամբակացան շրջաններում:

Բամբակագործական այն շրջաններում, ուր երկարակնճիթը մեծ վնասներ է պատճառում բամբակագործությանը, գետնանուշի մշակությունն առավել ևս անհրաժեշտ է դառնում:

Գետնանուշը կարելի է օգտագործել նաև որպես սիրերացիոն կուլտուրա խաղողի և պտղահատապային այնպիսի այդիներում, ուր հողն աղքատ է աղոսով:

3. ԳԵՏՆԱՆՈՒՇԻ ԱՃԵՑՄԱՆ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ, ՀՈՂԱՅԻՆ ՈՒ ԶՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ա. Կ 1 ի մ ա ն. Գետնանուշը ջերմասեր կուլտուրա է, ցրտերին չի դիմանում, նույնիսկ գարնան թեթև ցրտահարումներից վնասվում է. Հատկապես ծիլերը երեալու շրջանում գարնանային ցրտահարությունները ($-1-2^{\circ}$) սպանիչ են: Այս կուլտուրայի հաջող դարգացման համար անհրաժեշտ է մեղմ կլիմա, իսկ բերքի հասունացման սեպոնում՝ չոր և տաք եղանակ:

Գետնանուշը պահանջում է 5—6 ամսվա տևողությամբ

տաք վեգետացիոն շրջան՝ 3000° Ը ոչ պակաս ջերմության ընդհանուր քանակով։ Հետևապես հարկավոր է այս կուլտուրան աճեցնել կլիմայական այնպիսի պայմաններում, որ գարունը մեղմ է, ամառը տաք, իսկ աշունը երկարաժեխ, տաք ու համեմատաբար չոր։

Բ. Հ Ո Պ ը. Գետնանուշը փարթամ աճում ու առատ պըստդաբերում է թեթև կավավազային և ավազակավային հողերում։ Պինդ, ծանր ու քարքարոտ հողերը մատղաշ ծիլերի աճեցողությանն ու պտղակոթի՝ գետնի մեջ մտնելուն արգելակում են։ Աղուտ, ճահճուտ և թթու հողերում գետնանուշը չի աճում, թույլ հիմքային միջավայրը նպաստավոր է այս կուլտուրայի համար։

Գ. Զ Ո Ւ Ր ը. Գետնանուշը խոնավության հանդեպ համեմատաբար քիչ պահանջուտ է, սակայն ծաղկման ըրբանում, ամռան առաջին կեսերին՝ այս կուլտուրան ջրի մեծ պահանջ է զգում։

Գետնանուշի վեգետատիվ մասերի աճման շրջանում՝ եղանակը տաք և չոր լինելու դեպքում հարկավոր է գետնանուշը ջրել, մինչդեռ պտղի հասունացման շրջանում ջրը բելը, ինչպես և մթնոլորտային տեղումները վնասակար են։ Այս շրջանում բույսը պահանջում է չոր և տաք եղանակներ։

4. ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ցանքի ժամանակի ճիշտ ընտրության հարցը մեծ նշանակություն ունի գետնանուշի բարձր բերքատվությունն ապահովելու տեսակետից։ Եթր գետնանուշը ցանվում է այն ժամանակ, եթր հողը գեռ անհրաժեշտ չափով չի տաքացել և նրա ջերմաստիճանը 14° -ից ցածր է, սերմերը երկար ժամանակ չեն ծլում, նեխում կամ վնասատուներին։ (մրկներ, իշախառանչներ) կեր են դառնում։ Գետնանուշի ցանքը չպետք է նաև ուշացնել։

Ցանքի մոտավոր ժամանակն ապրիլի 20 —ից մայիսի 10 —ին է։ Լավորակ և առատ բերք ստանալու համար անհրաժեշտ է ընտրովի, առողջ ու բարձր ծլունակությամբ սերմեր ցանել։ Կիսահասած ու հիմանդուտ սերմերը ցանքի ժամանակ պիտանի չեն։

Մերմերն ունդերով միասին ցանելու դեպքում ծլունակությունը 20 — 30 տոկոսով ընկնում է։

Ունդերով ցանելու դեպքում անհավասար ծիլեր են ստացվում, դրանից տուժում է բույսերի զարգացումը և որ գլխավորն է, 20 և ավելի օր բերքն ուշ է հասունանում։ Հարկավոր է ցանքից մի քանի օր առաջ սերմերն ունդերից զատել և նոր ցանել։ Հարկ եղած դեպքում ունդերով միասին ցանելիս ծելու պրոցեսն արագացնելու համար հանձնարարություն է ունդերը 4—6 ժամով պահել ջրի մեջ և նոր ցանել (եթե միայն հողը խոնավ է), այլապես սերմերը կարող են փչանալ։

Մեկ հեկտար ցանքի համար մոտ 40—60 կիլոգրամ (մանրահատիկ սորտերինը՝ 20—40 կիլոգրամ)՝ սերմ է պահանջվում։ Ցանքը պետք է կատարել այնպես, որ չարքը շարքից 60—70 սմ, իսկ բույս-բույսից՝ 20—40 սմ հեռավորության վրա լինի։ Ունդերով միասին ցանելու դեպքում՝ հեկտարին մոտ 50—75 կգ ունդ է պետք։

Աշնանը հողը պետք է հերկել 25—30 սմ խորությամբ, և առանց փոցխելու թողնել մինչեւ գարուն։ Ցանքից առաջ հողը ջրել (կատարել արաթ) և քեշը գալուց ցանել։

Վաղ գարնանը, քեշի ժամանակ պետք է հողը փոցխել։ Ուժասպառ հողերում ցանելու դեպքում՝ գետնանուշը Փոս-Փորական, կալիումական և նույնիսկ կրային պարարտանյութերի կարիք է զգում, եթե վերջինիս քանակը հողի մեջ քիչ է։

Թարմ գոմաղբով անմիջապես պարարտացնելու վատարդյունք է տալիս։

Թարմ գոմաղբով պետք է պարարտացնել առնվազն ցանքից մի տարի առաջ։ Վերը նշված ցուցումները կիրառելուց զատ, ահրաժեշտ է կենսագործել նաև հետեւյալ ձեռնարկումները։

1. Գետնանուշի ցանքի համար ընտրել թեթև և մոլախուերից մաքուր հողեր։

2. Գարնանը ցանքի նախօրյակին հողը նորից պետք է փխրեցնել-կրկնավարել։

3. Ցանքը պետք է կատարել գարնան ցրտերի հավանական վտանգն անցնելուց հետո միայն։

4. Կատարել շարքահերկ ցանք, ցանել ունդերից մաքրըված սերմ։

5. Ծիլերը երեալուն պես ոկտել քաղհանը։

6. Գետնանուշի մասսայական ծաղկման շրջանում թերի բուկը տալ։

7. Բերքը հավաքել չոր և տաք օրերին, նախքան ցուրտ-
մը վրա հասնելը:

8. Գետնանուշը խնամքով չորացնել: Լով չորացումը
պտղի և անասնակերի բարձր երաշխիք է:

9. Բերքը տեսակավորել. վատորակ, ոչ լրիվ հասունա-
ցած և չմշկված պտուղները լավերից անջատել:

10. Գետնանուշը պահել չոր պահեստներում, այլապես
նա կկորցնի իր լավ հատկությունները և կանգետքանա:

Գետնանուշի հաջող մշակության և բարձրորակ խնամ-
քի պայմաններում հնարավոր է հեկտարից 15—17 ցենտներ
բերք և նույնքան անասնակեր ստանալ:

5. ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ՀԻՎԱՆԴՈՒԽԹՅՈՒՆՆԵՐԸ

Գետնանուշի հիվանդություններն ու վնասատուները
բազմաթիվ են:

Վնասատուներից են—մկները, առնետները, իշախա-
ռանչը, լարային որդը, երկարակնճիթը, մայիսյան բղեղի
թրթուրը, մրջյունները, որոնք ուտում են ծիլերը և որոշ
միջները:

Հիվանդություններից են—ա) Բորբոսանկերը, որոնք
զլիսավորապես զարդանում և վնասում են խոնավ պահեստ-
ներում:

բ) Ֆուզգարիումը, որից աստիճանաբար նեխում, մեռ-
նում են արմատները, ապա և ողջ բույսը:

գ) Cercospora personata «Ճիկկան», որն արտահայտվում
է տերենների վրա շագանակագույն բծերի ձևով: Սպորները
զոյանում են տերեփ ներքին երեսի վրա: Այս հիվանդու-
թյունը երևան է զալիս զարնան անձեռնոտ օքերին և եղա-
նակները տաքանալու, չորանալու հետ միասին անհետա-
նում է:

դ) Sclerotinia sp. վարակում է արմատի վերին մասերը:
Տերենների վրա գեղին բծեր են առաջանում, որից հետո
տերեններն աստիճանաբար սեանում և թափվում են: Վնաս-
ված բույսերը տալիս են դատարկ ունդերի մեծ տոկոս,
կամ թե ունդի մեջ սերմի փոխարեն լորձանման մասսա է
լինում:

դ) Գանգրոսությունը, որից վնասված բույսերը դեղ-

նում են և դադարում զարդանալուց։ Հիվանդությունը մի բույսից մյուսին է անցնում լինեների միջոցով։

6. ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻՆ ՈՒ ԲԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Գետնանուշի բերքը հավաքվում է հատուկ մեքենացով, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ կարտոֆիլ հանող մեքենայի օգնությամբ կամ ձեռքով։

Գետնանուշի թփերն արմատներով միասին հողից հանելուց հետո մի քանի օրով թողնում են արեկ տակ չորանալու, որից հետո կարում են և պտուղներն (ունդերն) անջատում։ Կարելի է նաև նախ գետնանուշի վերերկրյա մասերը հնձել և օգտագործել որպես անասնակեր, իսկ ստորերկրյա մասերը հանել, դլխիվեր փռել հողի վրա և չորացնել։ Ունդերը զատելուց հետո կարելի է հողը և արմատները վարածածկել, քանի որ սրանով հողը հարստանում է ազոտով։

Բերքահավաքից հետո, նախքան հողը վարելը հանձնարարվում է խոզերին դաշտ թողնել, որոնք հողը փորփռում և մնացած գետնանուշի ունդերը ուտում են։

Պտուղներն արեկ տակ լավ չորացնելուց ու հողից ժաքրելուց, հետո պահում են չոր և հող պահեստներում։ Խոնավ ու տաք պայմաններում գետնանուշի պաղի որտեղ ընկնում է։

7. ԳԵՏՆԱՆՈՒՇԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գետնանուշը բարձրաբժեք սննդանյութ է։ Նրա սերմերը հարուստ են ճարպերով ու սպիտակուցային նյութերով։ Ճարպի քանակը 40—55 տոկոսի է հատնում, այլ խոռըով ավելին, քան սոյայի մեջ է։

Գետնանուշի մշակության հիմնական նպատակը բուսայուղ ստանալն է։ Ցուղը պատկանում է չչորացող յուղերի թվին և հենց այս կարենոր հատկության չնորհիվ էլ բարձր է գնահատվում։ Այդ յուղը լավ արօմատ, գուրեկան համ, չատ քիչ քանակով աղատ թթուներ ունի և աղատ կարող է փոխարինել բուսական մյուս յուղերին (ձիթենու, կտավհատի, քունջութի և արևածաղկի յուղերին)։

Գետնանուշի յուղը գործածվում է կարագ պատրաստելու, ճաշի, չըռուշակեղենի, պահածոների, տեխնիկական

հալատակների (օճառ, օճանելիքներ պատրաստելու) համար և այլն: Տաքացնելուց նա չի փշանում և չի սեանում:

Գետնանուշի սերմերը թարմ մսին համարժեք ոպիտակուցային նյութեր ունեն: Բժշկականության մեջ գործադրվում է Տայրիթ կոչվող հիվանդությունը բուժելու համար:

Գետնանուշն իր մեջ պարունակում է A և B վիտամինները, բացակայում է C վիտամինը:

Գետնանուշից մենք պատրաստել ենք մի չարք սննդամթերքներ՝

ա. Գյունանուշի «կարագ»*). — Սերմենամաչկից զատած և լավ խնամքով բոված սերմերը մանր աղալուց՝ ստացվում է մրգի սովորական պավիդլոյի նման մի սննդանյութ, որ կոչվում է կարագ:

բ. Գյունանուշի յուղ. — Գետնանուշի սերմերը մամլում և յուղն անջատում են: Տասը կիլո մաքուր սերմից 5—5½ լիտր յուղ է ստացվում:

Սերմերը սառը վիճակում մամլելիս ավելի քիչ յուղ է ստացվում (40—50 տոկոս), քանի տաքացնելու դեպքում, սակայն տաք վիճակում մամլելիս յուղի որակը որոշ չափով ընկնում է: Այդ վերջին եղանակով ստացված յուղը գլխավորապես օգտագործվում է օճառի արտադրության մեջ: Գետնանուշի յուղը համարյա անգույն է, գեղնականաչափուն երանգով և իր որակով ձիթապտղի յուղից հետ չի մնում:

գ. Աղանդեր. Բոված գետնանուշը լավ համ, դուրեկան արոմատ է ունենում և գործադրվում է որպես աղանդեր, փոխարինելով անգամ նուշին: Լավ չբոված սերմերը հում գետնանուշի համի են լինում:

դ. Բոված գետնանուշի սերմերի մանրուքներն ու ջարդվածքներն օգտագործվում են հրուշակեղենի մեջ և կարագ պատրաստելու համար:

ե. Կոֆե. — Գետնանուշից պատրաստած կոֆեն («Աֆրիկական կոֆե») համով ու որակով հետ չի մնում իսկական կոֆեից, նույնիսկ ավելի նվազ գրգռիչ է, քան իսկական կոֆեն:

*.) Գետնանուշի «կարագը» իր որևէ հատկանիշով նման չէ կաթից պատրաստած կարագին, ավելի շուտ նման է պավիդլոյին: Կարագ է կոչվում այն պատճառով, որ նախ հարսի քանակը մեծ է, և ապա օգտագործվում է նույն այն նպատակների համար, ինչի համար իսկական կարագն է գործադրվում:

գ. Շոկոլադ. — Շաքարի, վանելինի, կինստմոնի և դետ-
նանուշի խիստ մանրացրած սերմերի խառնուրդից շոկոլադ
է պատրաստվում:

Ե. Առաջ. — Գետնանուշի կարագը տաք ջրով բացում,
վրան աղ ու համեմունք են ավելացնում, եռացնում, որից
ստացվում է համեղ սուազ:

Բ. Քաղցր կարագ կամ հալվա. — Գետնանուշի եարա-
գին շաքարավաղ կամ շաքարի խառացրած սոկ է ավելաց-
վում և սովորական հալվայի ձևով եփվում ու ստացվում է
քաղցր կարագ-հալվա:

Ծ. Գետնանուշի մնացորդները որպես աճանակեր. —
Գետնանուշի վեգետատիվ մասերը, պտուղների ու սերմերի
ժաշկը, մամլած սերմերի մնացորդը՝ քուսպն-օգտագործ-
վում է որպես հիանալի անասնակեր: Դրանք իրենց քիմի-
ական կազմով զիջում են միայն երեքնուրկին և առվույտին:

Գետնանուշի սերմնամաշկն իր մեջ 140/0 յուղ է պա-
րունակում: Գետնանուշի այսպես կոչված թեփը, որ սերմ-
նամաշկի և կալսելու ժամանակ ջարդված սերմերի խառ-
նուրդ է, հիանալի կեր է հանդիսանում:

Գետնանուշի քուսպը խողերի համար ամենալավագույն
կերն է համարվում:

Այսպիսով գետնանուշը կոնսերվի, հրուշակեղենի,
օճառի արդյունարերության համար հումք, ինչպես և
անասնակերի բազա ստեղծելու տեսակետից շատ արժեքա-
վոր կուլտուրա է:

Գետնանուշը մեծ արժեք ունի նաև հողն ազոտով
հարստացնելու, մոլախոտերից մաքրելու և բարձր եկա-
մուտ ստանալու տեսակետից: Այդ բոլորից բացի, գետնա-
նուշն այգիների միջարբային տարածություններում օդ-
տագործելու համար անփոխարինելի կուլտուրա է:

8. ԳԵՏՆԱՆՈՒՇԻ ՄԻԶՈՒԿԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Գետնանուշի քիմիական բաղադրությունը որոշելու հա-
մար վերցնում են պտղամաշկից ու սերմնամաշկից զատած
սերմերը և քանակական անալիզի ենթարկում:

Տարբեր սորտերի նմուշների քիմիական անալիզները
հետևյալ պատկերն են տվել ($^{\circ}/_0$ $^{\circ}/_0$).

Աղյուսակ № 1

| | Ամերիկայում ժամկետող | | | | |
|---|-------------------------|-------------------------|---|--|--|
| | Բազանա- կան սորտ | Վերգի- նիայի սորտ | Աֆրիկայի արդյունա- ծանածներից պարզաբնական թափառությունը | Հարցանային պարզաբնական թափառությունը | Հարա- ցանային պարզաբնա- կան թափառությունը |
| Զուր | 4,20 | 4,2 | 7,5 | 7,48 | 17,90 |
| Ազոտային նյութեր . . . | 26,00 | 29,00 | 24,5 | 27,5 | 18,66 |
| Ճարպ | 50,00 | 43,7 | 50 | 44,49 | 43,61 |
| Ահազան էրաստրակտային նյութեր | 15,1 | 17,1 | 11,7 | 15,50 | 15,51 |
| Թաղանթանյութ | 2,00 | 2,8 | 4,5 | 2,37 | 2,04 |
| Մոխիր | 2,60 | 2,7 | 1,8 | 2,49 | 2,10 |

Աղյուսակից երևում է, որ իսպանական սորտերն ազոտա-
յին նյութերի և ճարպի բաղադրությամբ առաջին տեղն են
բռնուած, Արարատյան դաշտավայրում մշակած զետնանուշը՝
վերջին, իսկ մնացածները — միջին տեղը:

Գետնանուշի, նուշի, ընկույցի ու կաղնի միջների քի-
միական կազմի համեմատությունն ըստ պրոֆ. Յերեվիտինովի
ավելիների՝ հետևյալ պատկերն է տալիս:

Աղյուսակ № 2

| | Զուր | Արցանային նյութեր | Ճարպ | Անդադար էրաստրա- կտային նյութեր | Թաղանթային նյութեր | Մոխիր |
|----------------------------------|------|----------------------|-------|--|-----------------------|-------|
| Զոր գետնանուշի միջուկը | 7,48 | 27,5 | 44,49 | 15,65 | 2,37 | 2,49 |
| » նուշի » | 6,27 | 21,4 | 53,16 | 13,22 | 3,65 | 2,30 |
| » ընկույցի » | 7,18 | 16,74 | 58,47 | 12,99 | 2,97 | 1,69 |
| » կաղնի » | 5,88 | 19,10 | 61,65 | — | 3,62 | 2,43 |

*) Անալիտիկ - Բ. Աֆրիկյան:

Աղյուսակից երկում է, որ գետնանուշի աղոտալին ու անազոտ էքստրակտային նյութերն ընկույզի համեմատությամբ ավելի բարձր տոկոս են կազմում, մինչդեռ ճարպերը ցածր:

Ընկույզի, կաղինի, ծիրանի կորիզի և գետնանուշի մաշկի ու միջուկների քանակական հարաբերությունը հետեւալ պատկերն է ավել ($\frac{0}{0}$ $\frac{0}{0}$)²

Աղյուսակ № 3

| Գետնանուշ ըստ այգեպտղ. սելեկ- ցիոն կայանի տվյալների | Ընկույզ | Ծիրան |
|--|---------|-------|
| Մէջուկ | 77 | 49 |
| Մաշկ | 23 | 51 |

Աղյուսակից երկում է, որ գետնանուշի միջուկի տոկոսն ավելի բարձր է, քան ընկույզինը և ծիրանինը: Այսպիսով, գետնանուշի մնացուկը համեմատաբար ավելի քիչ է, քան ընկույզինն ու ծիրանինը:

9. ԳԵՏՆԱՆՈՒՇԻՑԻՑ ՊԱՏՐԱՍՏՎՈՂ ԿԱՐԱԳԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

ա. Սերմերի գատումը պտղամաշկից ու սերմնամաշկից

Սերմերը պտղամաշկից ու սերմնամաշկից զատող մեքենան այս աշխատանքը հեշտացնում ու արագացնում է, սակայն հաճախ սերմնամաշկը խնամքով չի դատվում սերմից և սերմին կապած մնալով աղում են: Այդպիսի ալյուրից պատրաստած կարագը դառն ու անորակ է լինում: Հարկավոր է սերմնամաշկը խնամքով զատել սերմից և դրանով խոլ ապահովել կարագի բարձր որակը:

բ. Գետնանուշը բովելու և մանրացնելու տեխնիկան

Կարագի որակը կախված է գետնանուշի սերմերի որակից, դրանց բովելու հմտությունից և խնամքով աղալուց:

Բարձրորակ սերմն իր մեջ յուղի մեծ քանակություն է պարունակում, և դրանից պատրաստած կարագը բարձրորակ է լինում:

Խնամքով բովելու դեպքում թե՛ կարագի համն է լավ լինում և թե՛ դույնը, խոլ լավ մանրացնումն ապահովում է

կարագի նրբությունն ու համասեռությունը: Այսպիսի կարագը հատիկներից զերծ լինելով պավիդլոյի նման քսվում է հացին և հաճությամբ ուտվում:

Զափից ավելի բոված սերմերից պատրաստած կարագը դառը և այրածի համի է լինում. ընդհակառակը, լրիվ չբովելու դեպքում կարագը դժգույն, թույլ արոմատով և հում գետնանուշի համի է լինում:

Գետնանուշը բովվում է պտղամաշկի հետ միասին, հատուկ սարքավորման մեջ: Բովելու ժամանակը 20—30 րոպե տևողությամբ, 90°—100° C ջերմություն է պահպանվում:

Բովելու պրոցեսն ավարտված է համարվում այն դեպքում, երբ պտղի մաշկը բաց շագանակի դույն է ստանում, իսկ սերմնամաշկը ձեռքի թեթև հպումից դյուրությամբ պոկլում է սերմից: Այսպիսի սերմերը դուրեկան ու ախորժելի համ են ունենում:

Գետնանուշի բովելու ժամանակի տևողությունը կախված է ջերմության աստիճանից, բովվող պտղի քանակից և անոթի չափից:

Սերմերը խնամքով մանրացվում են դարձյալ հատուկ սարքավորման միջոցով:

գ. Աղի կամ շաքարի գործածությունը

Կարագ պատրաստելու համար բոված սերմերին ավելացվում է 0,5—10/0-չափով աղ: Աղը ոչ միայն կարագին համ է առաջին, այլև պաշտպանում է փչացումից, առանձնապես չողք օրերին:

Աղը պակաս լինելու դեպքում կարագը շատ չուտ կորցնում է արոմատը և ձեռք է բերում անդուրեկան ու կծու համ:

Մեր փորձերի ժամանակ աղի փոխարեն կարագի հետ 1—30/0-ի չափով շաքարավազ է գործադրվել: Այսպիսի կարագն իր կազմվածքով ու համով նմանվել է սովորական հալվային, սակայն աղով պատրաստած կարագն անհամեմատ ավելի համեղ ու դուրեկան է եղել, քան շաքարով պատրաստածը:

10. ԱՄԱՆՆԵՐԻ ՈՒ ԾՐԱՐԿՈՒՄԸ

Կարագը պահպանվում է փայտյա դույլերի, ապակյա ամանների ու բաժակների մեջ: Ամանները պետք է լիք

լցնել և ներսն օդ չթողնել, որպեսզի օքսիգացման հետեւանքով կարագի որակը չընկնի:

Կարագը լավ պահելու համար պետք է վակուում-ապարատի միջոցով օդը հանել, հերմետիկ փակել և պահել չոր ու զով պահեստներում: Հերմետիկ փակված կարագը երկար ժամանակ պահպանում է իր համը, դույնն ու արումառը:

Ամանները կարելի է նաև պաստերիզացիայի ենթարկել:

ԱՄՓՈՓՈՒՅ

1. Գետնանուշը հարուստ է ճարպերով, սպիտակուցներով, պարունակում է իր մեջ A և B վիտամիններ, ֆոսֆատներ, ալկալային աղեր և այլն:

2. Գետնանուշի յուղն իր չչորացող հատկությամբ բարձրորակ յուղերի շարքին է դասվում և որակով հետ չեմնում անդամ ձիթապտղի յուղից:

3. Գետնանուշից պատրաստվում է կարագ, յուղ, կոֆե, չոկոլադ և այլն:

4. Գետնանուշի մնացորդները (վեգետատիվ մասերը, պտուղների ու սերմերի մաշկը, քուսպը) ամենաորակյալ անասնակերերի շարքին են դասվում:

5. Գետնանուշը որպես շարքահերկ, ազուտ կապող բույս, հարստացնում է հողն ազոտով: Լավ նախորդ է հացահատիկային կուլտուրաների, մասնավորապես ցորենի:


6. Գետնանուշը պիտանի է նաև որպես սիդերացիոն բույս խաղողի և պտղահատապտղային այնպիսի այգիներում մշակելու համար, ուր հողն աղքատ է աղոտով, իսկ աղբը քիչ:

7. Գետնանուշը կարելի է տեսական ժամանակով պահել, նույնիսկ ձմռանը վերամշակել և այսպիսով կոնսերվի արդյունաբերությանը հումք տալ այն սեղոնում, երբ գործարանը բնակվ ծանրաբեռնված չէ և բանվորական ուժն աղբատ է:

8. Հետեւելով ՍՍՌՄ-ի և մասնավորապես Թրիլիսիի ու Զաքաթալայի սելեկցիոն կայանների հարուստ փորձին,

Հարկավոր է ամենալուրջ ուշագրությունը դարձնել գետնանուշի նոր սորտեր ստանալու և մշակության մեջ եղած ձևերն ազնվացնելու աշխատանքների վրա:

9. Արարատյան գաշտում և մասնավորապես Մեղրու շրջանում, գետնանուշի մշակության համար նպաստավոր պայմաններ կան: Հարկավոր է զարկ տալ այս կուլտուրայի մասսայական մշակությանը:




A 18411

Վ. 3220. Գատկեր 472, Ցիրաժ 1000. Տպագրական 1 մամ.
Հեղին. 0,65 մամ. Մեկ մամուլում 33280 նշան. Սարադրված է
տպագրության համար 18/VII-42 թ.

ԹՎԱՅՈՒԹՅԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Д. Н. Прянишников.— „Частное земледелие“, 8-е издание 1931 г.
 2. Н. Мелабде.— „Арахис“—Зак. книга 1931 г.
 3. З. А. Лузина „Арахис“—Огиз 1931 г.
 4. Clyde, H. Campbell — „A. text book on Canning preserving and pickling“, 1920 г.
 5. B. W. Jones „Peanut Plant“, 1920 г.
-



ՀԱՅԱՍՏԱՆԻ

A II
18411